ՎՋԵԲ

Ներդրում *Ամերիաբանկի* սեփական կապիտալում

Երկիր	Հայաստան
Ծրագրի համարը	47265
Բիզնես ոլորտ	Բանկեր
Հասարակական/Մասնավոր	Մասնավոր ոլորտ
Բնապահպանական դաս.	FI
Խորհրդի նիստի ամսաթիվը	2015թ. դեկտեմբերի 09-ը
Կարգավիճակ	Հաստատվել է խորհրդի կողմից:
Ծրագրի ամփոփված փաստաթղթի հրապարակման ամսաթիվը	

Ծրագրի նկարագիրը

Ծրագիրն իրենից ներկայացնում է 40 մլն ԱՄՆ դոլարի (մոտ 20 մլրդ ՀՀ դրամին համարժեք) ներդրում *Ամերիաբանկի* սեփական կապիտալում՝ *Ամերիաբանկ ՓԲԸ-ի* նոր թողարկվող բաժնետոմսերին բաժանորդագրվելու նպատակով: *Ամերիաբանկը* Հայաստանում առաջատար մասնավոր բանկերից մեկն է: Ներդրումն արվելու է երկու փուլով. սկզբնական փուլում ներդրվելու է 30 մլն ԱՄՆ դոլար (մոտ 15 մլրդ ՀՀ դրամին համարժեք)՝ ստանալու բանկին պատկանող կապիտալի մոտ 20.6% բաժնետոմսերը և քվեարկության իրավունքները, և հետո՝ 10 մլն ԱՄՆ դոլար, որը կօգտագործվի հետագայում կապիտալի ընդլայնման նպատակով:

Ծրագրի նպատակները

Այս գործարքը կսատարի *Ամերիաբանկի* կապիտալիզացիան և կարագացնի ռազմավարական աճի նպատակների իրականացման գործընթացը՝ որպես վերջնական նպատակ ունենալով Նախնական հրապարակային առաջարկը (IPO): Բանկը կընդլայնի ՓՄՁ-ներին, խոշոր տեղական ընկերություններին և անհատներին ֆինանսավորում տրամադրելու իր կարողությունները, զուգորդելով դրանք բարելավված ծառայություններով և ավելի առաջադեմ պրոդուկտներով և լուծումներով, և այդ ամենի արդյունքում նպաստելով երկրում ֆինանսական միջնորդության աճին և Ֆինանսների հասանելիության բարելավմանը: Աջակցությունը, որը ցուցաբերվում է *Ամերիաբանկի*՝ միաձուլման և ձեռքբերման գործարքներին, կօգնի մասնատված բանկային հատվածի համախմբմանը և ուժեղացմանը:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Անցումային շրջանի վրա ազդեցությունը կառաջանա *Ամերիաբանկի՝* Նախնական հրապարակային առաջարկին (IPO) նախորդող՝ աճի ապահովմանն ուղղված պլաններից, որոնց իրականացումը կաջակցի շուկայի ընդլայնմանը և Հայաստանում ֆինանսական միջնորդության ուժեղացմանը: ՎԶԵԲ-ը նաև կնպաստի կորպորատիվ կառավարման բարելավմանը՝ Խորհրդում ՎԶԵԲ-ի ներկայացուցիչ առաջադրելու միջոցով, ինչպես նաև նախնական հրապարակային առաջարկին (IPO) նախորդող՝ Կորպորատիվ կառավարման գործողությունների ծրագրի իրականացման միջոցով:

Հաճախորդի մասին

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ

Ամերիաբանկը Հայաստանի առաջատար բանկերից մեկն է և ամենամեծը՝ ակտիվների և հաճախորդների ավանդների առումով՝ 2014թ. շուկայում իր մասնաբաժինը կազմել էր, համապատասխանաբար՝ մոտ 11% և 13.5%: *Ամերիաբանկը* ՎԶԵԲ-ի հաճախորդ է հանդիսանում 2010թ.-ից և ՎԶԵԲ-ից ստացել է ֆինանսավորում Առևտրի խթանման ծրագրի (TFP), ինչպես անև փոքր և միջին բիզնեսի և էներգետիկ արդյունավետության վարկային գծերի միջոցով:

ՎԶԵԲ-ի տրամադրած ֆինանսավորումը

40,000,000.00 ԱՄՆ դոլար:

40,000,000.00 ԱՄՆ դոլար, որից նախնական ներդրումը կազմում է 30,000,000.00 ԱՄՆ դոլար:

Ծրագրի ընդհանուր արժեքը

55,000,000.00 ԱՄՆ դոլար:

ՎԶԵԲ-ի կողմից՝ 40 մլն ԱՄՆ դոլարի ներդրում սեփական կապիտալում, և 15 մլն ԱՄՆ դոլարի պոտենցիալ ներդրումներ՝ մասնավոր կապիտալից:

Բնապահպանական և սոցիալական ազդեցություն

Ստացել է FI դասի դասակարգում (2014թ. Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն): *Ամերիաբանկը* ՎԶԵԲ-ի ներկայիս հաճախորդն է և ունի

բնապահպանական և սոցիալական ընթացակարգեր, որոնք համապատասխանում են ՎԶԵԲ-ի՝ Կատարողականի նկատմամբ պահանջներին, և *Ամերիաբանկը* ներկայացնում է բնապահպանական և սոցիալական ասպեկտներին վերաբերող բավարար տարեկան հաշվետվություններ: *Ամերիաբանկը* պետք է վերանայի իր ընթացակարգերը՝ ապահովելու դրանց շարունակական համապատասխանությունը ՎԶԵԲ-ի՝ Կատարողականի նկատմամբ պահանջներ (ԿՊ) 2, 4 և 9-ին, և անցկացնի պահանջվող դասընթացները շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման վերաբերյալ բոլոր վարկային մասնագետների և, հատկապես, նոր աշխատակիցների և տարածաշրջանային մասնաճյուղերի անձնակազմի համար: *Ամերիաբանկը* պետք է կիրառի ՎԶԵԲ-ի՝ ԿՊ 9-ը ամբողջ վարկային պորտֆելի նկատամբ:

Տեխնիկական համագործակցություն

2010-2012թթ. ՎԶԵԲ-ը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել *Ամերիաբանկի* ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման գործընթացում տեխնիկական համագործակցության միջոցով, որը Վարկային խորհրդատվության ծառայությունների և Ինստիտուցիոնալ զարգացման ծրագրի մի մաս է կազմում և ֆինանսավորվում է ՎԱԵ Բազմադոնոր հիմնադրամի կողմից: Խորհրդատվությունը կենտրոնացած էր ՓՄՁ-ների հետ աշխատող վարկային մասնագետների և բանկի այլ աշխատակիցների պրակտիկ վերապատրաստման վրա, ամրապնդելով և բարելավելով մեթոդաբանությունը, ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը, բարձրացնելով այլ համապատասխան ընթացակարգերի արդյունավետությունը և անցկացնելով շրջակա միջավայրի վերաբերյալ դասընթացներ, որոնց արդյունքում բանկում հաստատվելու են բնապահպանական ընթացակարգեր և պրակտիկաներ:

Ամերիաբանկը նաև օգտվել է տեխնիկական համագործակցության միջոցներից Բանկի՝ առևտրի ֆինանսավորման ծրագրին և էներգախնայողության շրջանակին աջակցելու նպատակով:

Ընկերության կոնտակտային տվյալները

(374 10) 56 11 11

(374 10) 51 31 33

(374 10) 51 31 33

Ամերիաբանկ ՓԲԸ,

Հայաստանի Հանրապետություն,

Երևան 0015, Գրիգոր Լուսավորիչի փողոց, 9-րդ շենք

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

Ընդհանուր տեղեկատվություն

Գնումներին չառնչվող տեղեկատվություն ՎԶԵԲ-ի ծրագրերի մասին
Հեռ.՝ +44 20 7338 7168; Ֆաքս՝ +44 20 7338 7380
Էլ.փոստ՝ projectenquiries@ebrd.com

Հանրային տեղեկատվական քաղաքականություն (PIP)

Հանրային տեղեկատվական քաղաքականությունը ի ցույց է դնում, թե ինչպես է ՎԶԵԲ-ը ներկայացնում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի ավելի բարձրացնի իր ռազմավարության, քաղաքականության և գործունեության վերաբերյալ իրազեկումը:

Հանրային տեղեկատվական քաղաքականության տեքստին ծանոթանալու համար այցելե՛ք Text of the PIP

Ծրագրերի Բողոքարկման Մեխանիզմ (ԾԲՄ)

ՎԶԵԲ-ը հիմնել է Ծրագրերի վերաբերյալ Բողոքարկման Մեխանիզմը (PCM), որպեսզի այն Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկա կամ հնարավոր վնասակարության մասին անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների անկախ ուսումնասիրություն անցկացնի: ԲՄ-ին վերաբերող գործընթացի օրենքներին կարող եք ծանոթանալ http://www.ebrd.com/about/integrity/irm/about/pcm.pdf կայքում: Ռուսերեն տարբերակի համար այցելե՛ք http://www.ebrd.com/about/integrity/irm/about/PCMRulesRussian.pdf

ԲՄ-ի ներքո բողոքները պետք է ներկայացվեն ՎԶԵԲ-ի ֆինանսավորման վերջին տրանշից ոչ ուշ քան 12 ամսվա ընթացքում: Կարող եք կապվել ԲՄ-ի տնօրենի (pcm@ebrd.com) կամ ՎԶԵԲ-ի համապատասխան տեղական գրասենյակի հետ, եթե վստահ չեք, թե ինչ ժամանակահատվածում պետք է ներկայացնեք բողոքը: